ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2015 թվական N: 71-Ա ք.Գյումրի

<<ԱՆԻ-ՊԵՄԶԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի N 118 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<ը>> ենթակետերի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման 1-ին կետի պահանջի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<Անի-Պեմզայի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 700000 Հայաստանի Հանրապետության դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 137993 Հայաստանի Հանրապետության դրամով՝ 137993 հասարակ (սովորական) բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով: Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցումից հետո կկազմի 562007 Հայաստանի Հանրապետության դրամ՝ 562007 հասարակ (սովորական) բաժնետոմս, 1 բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1 Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2000 թվականի նոյեմբերի 6-ի <<Շիրակի մարզի թվով 47 առողջապահական ՊՓԲԸ-ների անվանափոխման և նրանց կանոնադրությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու մասին>> N 118 որոշմամբ հաստատված <<Անի-Պեմզայի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1-ին կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել <<Անի-Պեմզայի առողջության կենտրոն>>փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Պետրոս Պետրոսյանին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանին:

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

2015 թվականի ապրիլի 29-ի N 71-Ա որոշման

<<ԱՆԻ-ՊԵՄԶԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

Կանոնադրության 4.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

4.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 562007 Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 562007 հասարակ (սովորական) բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1 Հայաստանի Հանրապետության դրամ:

Բոլոր 562007 հասարակ (սովորական) բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են հիմնադրին՝ Հայաստանի Հանրապետությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ